

Մարզում տրանսպորտի և ճանապարհաշինության ոլորտում իրականացվել են 2.52 մլրդ դրամի աշխատանքներ

Այս տարի Սյունիքի մարզում տարբեր ֆինանսավորման աղբյուրներով մարզի ճանապարհաշինարարական և այլ կազմակերպությունների կողմից իրականացվել է ավելի քան 2.52 մլրդ դրամի աշխատանքներ, որից ՀՀ պետական բյուջեով՝ 2.508 մլրդ և այլ աղբյուրների հաշվին՝ 14.9 մլն դրամ: n

ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ տարբեր նշանակության ճանապարհների հիմնանորոգման, ինչպես նաև պետական ու մարզային նշանակության ճանապարհների ձմեռային պահպանության, ընթացիկ պահպանման և շահագործման համար իրականացվել է 2426,8 մլն դրամի աշխատանքներ, այդ թվում՝ 1412.6 մլն դրամի միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների հիմնանորոգում: ՀՀ կառավարության ՀՀ Սյունիքի մարզին հատկացված 159,528 մլն դրամով ասֆալտապատվել են Կապան, Գորիս, Սիսիան և Ագարակ քաղաքների ներհամայնքային ճանապարհները: Մարզի միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ճանապարհների ձմեռային պահպանության, ընթացիկ պահպանման ու շահագործման համար ծախսվել է 854.669 մլն դրամ գումար: Արհեստական կառույցների պահպանության և շահագործման, մասնավորապես, Արաքս գետի Մեղրիի կամուրջ և Մ-2 ճանապարհի նշագծման համար՝ 81,213 մլն դրամ գումար:

Հասարակական տրանսպորտի աշխատանքներն անվտանգ կազմակերպելու և բարելավելու նպատակով ներմարզային 3 երթուղիներում ուղևորափոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության համար կազմակերպվել և սահմանված կարգով անց են կացվել նոր մրցույթներ:

Սյունիքի մարզի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տարբեր նշանակության ճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 1041.05 կմ, այդ թվում միջպետական՝ 359.6 կմ, հանրապետական՝ 166.25 կմ և մարզային նշանակության 515.2կմ երկարության ճանապարհներ: